## Նվիրվում է Կ. Սարաջևի ծննդյան 145-ամյակին

ԱՐՈՒՍՅԱԿ ՄԱՐԿԻ
ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Երաժշտագէտ,*
*ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտաշխատող*
E-mail: arusyak.petrosyan@gmail.com
Doi:10.58580/18290019-2022.1.62-4

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կաղլենի Շագոյանի՝
15.12.2022 թ., ընդունվել է տպագրության՝ 16.12.2022 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 10.12.2022 թ.

# *ԱՐԺԱՆԻ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԸ*

**Ամփոփում**

Հոդվածագիրը ներկայացնում է տաղանդավոր և բարձր մասնագիտական կարողությունների տեր դիրիժոր Կ. Ս. Սարաջևին իր դասավանդման և գիտելիքները՝ նվագախմբի հետ աշխատելու հիմնական դրույթները փոխանցող նրա ստեղծագործական կողմնորոշումները, որոնց մասին առ այսօր գրում են շատ դիրիժորներ, կոմպոզիտորներ, երաժշտագետներ, և վկայակոչում պրոֆեսոր Արմեն Բուդաղյանի աշխատությունը: Հոդվածագիրն անդրադարձ է կատարում Կ. Սարաջևի դասարանի շրջանավարտ Գևորգ Բուդաղյանի և Միքայել Մալունցյանի գործունեությանը, ինչպես նաև նրանց հետևող մյուս հայ դիրիժորների սերունդների ստեղծագործական ջանքերի արդյունքներին, որոնց շնորհիվ էլ այսօր հայ դիրիժորական «շկոլա» է առկա և դրա ներդրման մասին է վկայում Հայաստանի ամբողջ կատարողական դաշտը:

**Բանալի-բառեր.** Սարաջև, ռուսական դիրիժորության ամբիոնիի հիմնադիր, մանկավարժություն, դաստիարակություն, հայ դիրիժորական «շկոլա», ստեղծագործություն, կատարողական արվեստ:

**Abstract**

Music-ethnographer, of the Institute of Arts of the NAS RA **Arusyak Mark Petrosyan. - "Worthy followers".**

In this article, the author presents the talented and highly skilled conductor K. S. Sarajev s teaching and expertise, his creative approach to the basic principles of working with the orchestra, to which many conductors, composers, musicologists refer today, highlighting Professor Armen Budaghyan's work. The author of the article refers to the achievements of graduates of Sarajev's class Gevorg Budaghyan and Mikael Maluntsyan. Thanks to the efforts of these individuals, as well as those of the generations of other Armenian conductors the Armenian conducting "shkola" ("school") exists today and the entire field of Armenian performing art testifies to its contribution.

**Key Words:** Sarajev, founder of the Russian Conducting Department, pedagogy, education, Armenian conducting "shkola" ("school"), creativity, performing arts

**Абстракт**

Этномузыковед, научный сотрудник Института искусств НАН РА **Арусяк Марковна Петросян. - "Достойные последователи".**

Автор представляет талантливого дирижера К. С. Сараджева, его творческие ориентиры, передающие ос - новные принципы работы с оркестром, о которых сегодня пишут многие дирижеры, композиторы, музыковеды, ссылаясь на труды профессора Армена Будагяна. Автор отмечает деятельность выпускников сараджевского класса - Геворка Будагяна и Микаела Малунциана, а также результаты творческих усилий следующих за ними поколений армянских дирижеров, благодаря которым сегодня существует армянская дирижерская школа.

**Ключевые слова:** Сараджев, основатель кафедры дирижирования московской консерватории, педагогика, образование, армянская дирижерская школа, творчество, исполнительское искусство.

*Նախաբան*

*XX դարի սկզբում պրոֆեսիոնալիզմի ձևավորումն ազգային դասական երաժշտության ասպարեզում առաջացնում է համապատասխան մեկնաբանման անհրաժեշտություն: Մասնավորապես այսօր մեզ հետաքրքրող դիրիժորական արվեստը Հայաստանում դժվար էր կայանում տարբեր պատճառներով, որոնցից առաջին հերթին պետք է նշել այն, որ դիրիժորական դասարաններ կային միայն Մոսկվայի և Լենինգրադի կոնսերվատորիաներում, այնտեղ էին մասնագիտանում և հայազգի նշանավոր երաժիշտները: Կոնստանտին Սողոմոնի Սարաջևի անունը, որպես Մոսկվայի կոնսերվատորիայի դիրիժորական բաժնի հիմնադիր, անբաժան է*

*սովետական սիմֆոնիզմի պատմությունից, իսկ 1935 թ. գտնվելով Սովետական Հայաստանում, նա դարձավ ազգային նվագախմբային մշակութի կայացման ու զարգացման հեղինակներից մեկը: Պրոֆեսիոնալ դիրիժորների բացակայությունը Հայաստանում սուր էր զգացվում և, վերջապես, մշտական կազմով նվագախումբ ստեղծվեց Երևանում միայն 1930-ական թվականների սկզբին, կապված օպերային թատրոնի բացման հետ, իսկ ֆիլհարմոնիկ նվագախմբի վերջնական ձևավորումը կայացավ 1945 թվականի վերջին: Այդ նվագախմբերի ղեկավարների, առաջին պրոֆեսիոնալ հայազգի դիրիժորներ, Մոսկվայի կոնսերվատորիայում Կ. Սարաջևի դասարանի շրջանավարտ Գևորգ Բուդաղյանի և Միքայել Մալունցյանի, ով մասնագիտացել էր նույնպես կոնսերվատորիայի Լեո Գինզբուրգի դիրիժորական դասարանում, ինչպես նաև նրանց հետևող մյուս հայ դիրիժորների սերունդների ահռելի ստեղծագործական ջանքերի արդյունքները, թույլ են տալիս այսօր խոսել հայ դիրիժորական «շկոլայի» և դրա անվիճելի ներդրման մասին Հայաստանի ամբողջ կատարողական դաշտում:*

***Գևորգ Բուդաղյան***

*Նվագախմբի հետ աշխատելու նրանց հիմնական դրույթներում դժվար չէր ճանաչել Կ. Սարաջևի ստեղծագործական կողմնորոշիչները, որոնց մասին գրում է երաժշտագետ, պրոֆեսոր Արմեն Բուդաղյանը իր գրքում (Յ.): Դրանք են.*

*1) Ապահովել նվագախմբի գեղարվեստական զարգացումը, կադրային քաղաքականությունը, կոլեկտիվի անդամների մասնագիտական որակի բարձրացումը:*

*2) Երաժշտության հանրահռչակումը լայն մասսաներում:*

*3) Աշխատանք երիտասարդ մենակատարների հետ և նրանց ստեղծագործական զարգացման խթանումը:*

*4) Հետաքրքիր ծրագրեր, կազմված դասական ու ազգային երաժշտության արժեքավոր նմուշներից:*

*5) Կապը ժամանակակից կոմպոզիտորների հետ և նրանց նորաստեղծ գործերի պրեմիերաները և այլն:*

*Գևորգ Բուդաղյանը մեկն էր այն անհատներից, ում Հայաստան գալն ու աշխատանքի մեջ գլխապտույտ նետվելը համահունչ էին ստեղծագործական մթնոլորտի վերելքին, որ գոյացել էր Հայաստանում 1917 թվականի հեղափոխությունից հետո, նոր հասարակարգ կառուցողների շրջանում: Բաքվում ծնված, Մոսկվայի կոնսերվատորիայի առաջին շրջանավարտ հայ դիրիժորին ջերմորեն են դիմավորում Երևանի կոնսերվատորիայում:*

*Ռեկտոր Ա. Տեր-Ղևոնդյանը, Ս. Մելիքյանը վստահում են նրան նվագախմբային և օպերային դասարանները:*

*Բուդաղյանը համալրում է կոնսերվատորիայի նվագախումբը, որն այն ժամանակ միակն էր Հայաստանում, ու ելույթները դարձնում հաճախակի: Երկացանկում էին Բեթհովեն, Չայկովսկի, Ռիմսկի-Կորսակով, Ա. Սպենդիարյան, որի «Ալմաստ» օպերայի հնչյունների ներքո շուտով բացվելու էր օպերային առաջին թատրոնի վարագույրը: Գևորգ Բուդաղյանը, ամբողջ էությամբ նվիրվելով սիրելի հեղինակի ստեղծագործության մեկնաբանությանը, 25 անընդմեջ տարիներ, հղկել ու վերջիվերջո կատարյալին է հասցրել «Ալմաստի» պարտիտուրի իր ընթերցումը: Միայն 1933-1934 թթ-ի թատերաշրջանում Բուդաղյանի ղեկավարած «Ալմաստը» հանդիսատեսին է ներկայացվել 30 անգամ: Իրավամբ, արվեստագետին կարելի է համարել «Ամաստի» լավագույն մեկնաբան դիրիժորը: Եվ դա այն դեպքում, երբ դեռ չէր կարգավորվել մշտական կադրերի՝ հատկապես վոկալիստների հարցը:*

*Գևորգ Բուդաղյանը, որպես հայ օպերային թատրոնի հիմնադիրներից մեկը, քառորդ դար լինելով առաջատար դիրիժոր, առաջնակարգ նշանակություն էր տալիս ազգային արվեստին: Այսպես, 1935 թվականին նա հանձն է առնում ռեժիսոր Արշակ Բուրջայանի հետ միասին բեմադրել Հարո Ստեփանյանի «Քաջ Նազար» նորավարտ օպերան: Նրա անմիջական ստեղծագործական միջամտությամբ բեմալույս են տեսել Կարո Զաքարյանի «Մարջանը», Անուշավան Տեր-Ղևոնդյանի «Արեգակի ցոլքերում», Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկը», որում հեղինակի մահվան պատճառով Գևորգ Բուդաղյանն իր վրա վերցրեց ստեղծագործական խմբագրման ամբողջ գործը:*

*Եվ վերջապես, կարևոր է «Խանդութ» բալետի հրապարակ գալը, որի երաժշտության հիմք են ծառայել Սպենդիարյանի ռոմանսները, գործիքային մանրա- նվագները, որոշ սակավածանոթ սիմֆոնիկ կտավները: Գործիքավորելով բալետի երաժշտությունը՝ Գևորգ Բուդաղյանը ձգտել է հարազատ մնալ ոչ մի այն կոմպոզիտորին բնորոշ նվագախմբային հնչողությանը, այլև հեղինակի լայտթեմաների նախասիրությանը: «Խանդութ» բալետն արժեքավոր ներդրում էր ազգային բալետային արվեստում, այն նպաստեց ազգային դասական պարի ստեղծմանն ու հայկական բալետի հետագա զարգացմանը:*

*Բուդաղյանի ծրագրերը հարուստ էին նաև ռուս, սովետական և արևմտաեվրոպական հեղինակների գործերով՝ Չայկովսկի «Եվգենի Օնեգին», Բորոդին «Իշխան Իգոր», Ռուբինշտեյն «Դևը», Բիզե «Կարմեն», Պուչինի «Չիո-Չիո-Սան», Դելիբ «Լակմե», Ու. Հաջիբեկով «Քյոռօղլի», Փալիաշվիլի «Դաիսի»:*

*Յուրաքանչյուր անգամ խնդրի լուծման գեղարվեստական նոր միջոցներ որոնող երաժիշտը հեռու էր կրկնողությունից ու շաբլոնից: Բուդաղյանը փայլուն գիտեր բեմի ու նվագախմբի փոխադարձ կապի օրենքները, ճաշակը նրբին էր, երևակայությունը հարուստ:*

*Երևանի կոնսերվատորիայում Գ. Բուդաղյանի գիտական, մանկավարժական ու հասարակական գործունեությունը մշտապես տվել է նշմարելի արդյունքներ: Այստեղ նա հանդես է բերել խնդիրները պետականորեն, ստեղծագործաբար լուծելու ունակություն, նրա նախաձեռնությամբ, օրինակ, ստեղծվել է «հայ երաժշտության պատմություն» սիստեմատիկ դասընթացը:*

*Գևորգ Բուդաղյանի ծառայությունները հատկապես ծանրակշիռ են Ա. Սպենդիարյանի ստեղծագործությունների խմբագրման ու ակադեմիական հրապարակման*

# Նվիրվում է Կ. Սարաջևի ծննդյան 145-ամյակին

*մեծածավալ գործում: Տասնմեկհատորյա այս ժողովածուն, հանրագումարի բերելով Սպենդիարյանի ստեղծագործությունը, միաժամանակ ընդգծում է հեղինակի անցած ուղին առաջին քայլերից, երբ նա գտնվում էր ռուս դասական երաժշտության ազդեցության ոլորտներում, մինչ անցման շրջանը, երբ սնվեց հայկական ժողովրդական մելոսի ակունքներից:*

***Միքայել Մալունցյան***

*Երաժիշտ էր ամբողջ էությամբ և Միքայել Մալունցյանը: Ժամանակակիցները նրան անվանում էին «քայլող երաժշտական հանրագիտարան»: Ծանոթ էր հարյուրավոր պարտիտուրների, լինեին դրանք կամերային, սիմֆոնիկ, թե օպերային: Գիտեր երաժշտության պատմություն, տեսության ու գրականության շատ մանրամասներ, որ կիրառում էր իր պրակտիկ գործունեության ընթացքում:*

*Ապագա դիրիժորը, ով ծնվել էր 1903 թվականին Բաքվում, 8 տարեկանից նվագել է թավջութակ, փայլուն սովորել է Թիֆլիսի կոնսերվատորիայի լարային բաժնում (Մինչարի դասարանում), իսկ Մոսկվայի կոնսերվատորիայում սովորելիս արդեն կայացած երաժիշտ էր: Մեծ էր Մալունցյանի ցանկությունը Հայաստանում աշխատելու, և 1945 թվականին նա գալիս է Հայաստան: Այստեղ էր նրան վիճակված գրելու հայրենի մշակույթին նվիրված իր կենսագրության ամենափայլուն էջերը:*

*Մալունցյանը իրեն հատուկ խանդավառությամբ լծվում է գործին, առաջ մղում այն մեծ ճիգերով, բայց հաստատակամ: Արդեն մի քանի ամսից, 1945 թ. նոյեմբերի 19-ին Մալունցյանի ղեկավարած Հայֆիլարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը տալիս է իր անդրանիկ համերգը, ինչը կարելի է համարել Հայաստանում սիմֆոնիկ նվագախմբերի պատմության գլխավոր էջը:*

*1945-1948 թթ. Մալունցյանը սիմֆոնիկ նվագախբի գլխավոր դիրիժորի պարտականությունները համատեղում է օպերայի և բալետի թատրոնում աշխատելու հետ, սակայն երաժշտին խորթ էր երկընտրությունը, ու նա որոշում է լուծել մեկ, բայց կարևոր խնդիր՝ Հայֆիլարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի կատարողական մակարդակը բարձրացնել ՍՍՀՄ-ում եղած լավագույնների աստիճանին:*

*1945-1960 թթ-ին նվագախումբն՝ իր ղեկավարի գլխավորությամբ, առաջին անգամ կատարում է մոտ 500 ստեղծագործություն՝ սիմֆոնիաներ, օպերային և բալետային հատվածներ, կանտատներ, գործիքային կոնցերտներ և ուրիշ գործեր:*

*Նվագախմբի երկացանկում ընդգրկված էին հայ դասական և ժամանակակից հեղինակների ստեղծած բոլոր սիմֆոնիկ կտավները, ռուս, սովետական և արևմտաեվրոպական կոմպոզիտորների հարյուրավոր գործեր:*

*Նվագախմբի հետ հեղինակային համերգներ էին ունենում Ռ. Գլիերը, Դ. Կաբալևսկին, Ա. Խաչատրյանը և շատ ուրիշ հայտնի կոմպոզիտորներ:*

*Փայլուն կատարողների համաստեղություն՝ Իգոր Բեզրոդնին, Էմիլ Գիլելսը, Զարա Դոլուխանովան, Պավել Լիսիցյանը, Կոնստանտին Իգումնովը, Լև Օբորինը, Դանիիլ Շաֆրանը և շատ ուրիշներ, նաև արտասահմանյան կատարողների անուններ էին ներկայացված մալունցյանական նվագախմբի ազդագրերում: Հյուրախաղերը լուսաբանվում էին հանրապետական ու միութենական պարբերականներում: Հատուկ նշվում էր Մալունցյան - դիրիժորի արժանիքներից և այն, որ նա իսկական անսամբլիստ էր: Ամենակարճ փորձային ժամանակամիջոցում նա հասցնում էր ստեղծել անսամբլային հավասարակշռություն նվագախմբի բոլոր օղակներում, ստանալ արտահայտչականության առավել գորություն: 1956 թվականին Մոսկվայում կայացած հայ արվեստի ու գրականության օրերին նվագախումբը հասավ իսկական ճանաչման: Հեղինակավոր մասնագետների կարծիքը հանգում էր մի եզրակացության՝ Հայֆիլարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը Միության լավագույններից է:*

*Միքայել Մալունցյանն իր արվեստի ծաղկման գագաթնակետին էր, երբ պատահեց ավտովթար: 1960 թվականին նա իր նվագախմբի ղեկավարությունը հանձնում է Օհան Դուրյանին: Ու միայն 1966-1967 թթ-ին Մայունցյանը դեպքից դեպք է համաձայնում վերցնել դիրիժորական փայտիկը:*

*Համակողմանի զարգացած Միքայել Մովսեսի Մալունցյանին գնահատում էին երկրի երաժշտական կենտրոններում: 1962 թվականին վոկալիստների Գլինկայի անվան և 1971 թվականին երիտասարդ դիրիժորների համամիութենական մրցույթներում նա ընդգրկվեց այդ խոշոր մրցանակաբաշխությունների հանձնախմբի կազմում:*

*Դիրիժոր-կատարողի և մանկավարժ-դաստիարակի հատկությունները զուգակցող Մալունցյանը գործունեություն էր ծավալել Երևանի կոնսերվատորիայի նվագախմբային դասարանում: Գործող նվագախմբերը համալրող նրա ուսանողները մշտապես դրսևորել են ուսման տարիներին Մալունցյանի դասարանում ստացած կարողությունները:*

***Վերջաբան***

*Երևանում դիրիժորության դասարանի բացման հարցի դրական լուծումը ևս պայմանավորված էր փորձառու, լայն էրուդիցիայի տեր դիրիժոր-մանկավարժի ներկայությամբ: Մալունցյանի դասարանում են սովորել մի շարք ընդունակ երաժիշտներ: Հայֆիլարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի ապագա գլխավոր դիրիժոր, համամիութենական մրցույթի դիպլոմանտ Դավիթ Խանջյանը, հեռուստատեսության և ռադիոյի նվագախմբի ապագա գլխավոր դիրիժոր Ռաֆայել Մանգասարյանը, բազմախոստում Գերման Տերտերյանը, դիրիժոր-էրուդիտ Արա Մարկոսյանը, Արցախի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր Գևորգ Մուրադյանը և ուրիշներ:*

*Միքայել Մալունցյանին համարձակ կարելի է դասել լավագույն սովետական դիրիժորների համաստեղության շարքը: Գրեթե նույն ժամանակահատվածում իրենց գործունեությունը ծավալած այս արվեստագետների կյանքի ճանապարհները, որքան էլ միմյանցից արտաքնապես տարբեր, սերտորեն առնչվում են ազգային երաժշտական մշակույթի՝ հատկապես դիրիժորական արվեստի գոյացմանն ու հաստատմանը:*


ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Պետրոսյան Մ., Երեքը հայ դիրիժորներից, Եր., 1976 թ.:*
2. *Հայ երաժշտության հանրագիտարան, Եր., 2019 թ., էջ 130, 428:*
3. *Будагян А. Г.,* К. С. Сараджев и московский самодеятельный оркестр его имени., Ер., 2022.
4. *Petrosyan M.,* "Three of Armenian Conductors", Yer., 1976.

Armenian Music Encyclopedia, Yer., 2019., p. 130, 428.

*Budaghyan A. G.,* K. S. Sarajev and Moscow Amateur Orchestra Named after Him., Yer., 2022.

**REFERENCES**

1. *Petrosyan M.,* Ereqk' hay dirizhorneritz, Yer., 1976 th.:
2. Hay yerazhshtuthyan hanragitaran, Yer., 2019 th., ejj 130, 428.
3. *Budaghyan A. G,* K. S. Sarajev i moskovskij samodeyatel'nyj orkestr ego imeni., Yer., 2022.



***Հեղինակի մասին.*** *ԱՐՈՒՍՅԱԿ ՄԱՐԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետ. Կոնսերվատորիան «Երաժշտագիտություն» մասնագիտությամբ: Ավարտել է ՀՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան: 1984 թվականից աշխատում է Արվեստի ինստիտուտում որպես գիտաշխատող (մինչ այսօր): Հեղինակ է մի շարք հոդվածների, մասնակցել է միութենական ու միջազգային գիտաժողովների: 1996 թվականին Երևանում հրատարակել է «Գերոնտի Թալալյան» մենագրությունը: Շուրջ 25 տարի դասավանդել է Երևանի պետ. կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնում:*

***Об авторе:*** *АРУСЯК МАРКОВНА ПЕТРОСЯН. Окончила: Ереванскую государственную консерваторию им. Комитаса по специальности "Музыковедение"; аспирантуру Института искусств НАН РА. Работает в Институте искусств НАН РА в качестве научного сотрудника (с 1984 года по сегодняшний день). Около 25 лет преподавала в ЕГК курсы истории армянской, русской и зарубежной музыки. Автор ряда статей, участвовала в республиканских и международных конференциях с докладами по музыкально-теоретическим вопросам. В 1996 году (Ереван) опубликовала монографию "Геронтий Талалян".*

***About the author:*** *ARUSYAK MARK PETROSYAN. graduated from the Yerevan State Komitas Conservatory with a degree in Musicology (1979, supervisor M. A. Brutyan, Professor, PhD in History of Art), and completed her post-graduate studies at the Institute of Arts of the National Academy of Sciences (academic supervisor N. K. Tagmizian, Professor, Dr. Sci. [Arts]). Since 1984, she is a researcher at the Institute of Arts of the NAS of Armenia. She is the author of "Grronty Talalyan" monograph (Yerevan, 1996; Areg Publishing), and around twenty research articles. She has participated in numerous national and international conferences in Yerevan, Gyumri, Moscow, and Riga. For nearly 25 years, she has been a lecturer at the Department of History of Music at Yerevan State Komitas Conservatory.*